

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան ֆրբ. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրբ. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՍԻԿ

Գրութիւնք ետ չեն
տրուիր:

Հասցե

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Եթէ կ'ուզե՛ք «Հայելի»-ին մէջ աղոյր երեւնալ,

Պատշի՛ք սիրուն եւ ազնիւ դիմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

(Այսօրուան Թղթաքեր)

ԳԱՒԱԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ

Գաւառային բարեգործութեանց երկու հաճելի լուրեր կը հասնին Իզմիրէն և Էրզրումէն:

Ստեփան Թէստէրէճեան և Տիկինը Գարաթաշի մէջ իրենց ունեցած ծովեզերեայ միջոց տունը՝ կահ կարասիներովը մէկտեղ՝ 5—600 ոսկի արժողութեամբ, օրինական միջոցաւ նուիրած են Իզմիրի Ս. Լուսաւորչեան հիւանդանոցին, պայմանագիր ընդունելով Գաւառ. Վարչութենէն որ մինչև իրենց մահը իրաւունք ունենան այդ տանը մէջ բնակելու, կալուածական տուրքերը ու ապահովագրական ծախքերը վճարելով: Նուիրատու ամուսինները անդաւակ են: Էրզրումէն ալ կը հաղորդեն թէ, քաղաքին՝ ազգայիններէն Ստեփան մշտնաշատուրեան 600 ոսկի արժողութեամբ իր ջրաղացը ազգին կտակած է: Նոյնպէս, մշտ. կարապետ Տ. Ղուկասեան իր 200 ոսկի արժողութեամբ տունը կտակել է քաղաքին եկեղեցիին:

Իզմիրի Գաւառ. Վարչութիւնը իր վրայ առեր է պարտուց բարձման ծանր հոգը և թէ ժողովականներէն Արապեան, Եսայեան և Սպարթալեանք, արդէն իսկ ստորագրուել են 300ական ոսկի հարկերին 3 տոկոսով:

Եէտի Գուլէի Ս. Յակոբայ Որբանոցը հիմա ունի 185 աշակերտ: 12 որբեր կը պարապին կոշկակարութեամբ որուն համար արհեստանոց մը բացուած է. մօտերս պիտի հաստատուի նաև դերձակութեան ճիւղը:

Տիգրանակերտէն կը գրեն թէ հացի գինը՝ բաղդատմամբ անցեալին՝ իջած է. քաջը 28 փարա: Այս տարուան հունձքերը լաւ են:

Մեղաճրի և Բաֆէ շոգենաւային ընկերութեանց Սամսոնի գործակալութիւններէն Մարտէյլ իրենց կեդրոնին ղրկուած հեռագիրներ կազդարարեն որ այսուհետև ալ Հայ չընդունին իրենց շոգենաւներուն մէջ Մարտէյլէն Սամսոն տանելու համար, որովհետև տեղական իշխանութիւնք Բ. Գաւէն ստացած նոր հրամաններու համաձայն չեն թոյլատրելու Հայերուն որ Սամսոն ելնեն:

Կիլիկիոյ Կաթողիկոսական Ընտրութիւնը.

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իրաւասութեան տակ կը գտնուին հետեւեալ թեմերը. Հալէպ քաղաքը 2 գիւղերով. Մարաշ՝ 20, Զէյթուն՝ 7, Ֆրնուզ՝ 17, Այնթապ՝ 6, և Աթաբա՝ 12 գիւղերով: Ատանա՝ 10 գիւղեր. Սիս՝ 4, Հաճըն՝ 5, Փայաս 10 գիւղերով. Մալաթիա 18 գիւղերով. Կիւրիւն՝ 23 գիւղերով. Տիվրիկ 12 և Տարէնտէ 5 գիւղերով. Խօզդատ՝ 42 գիւղերով: Բոլոր այս թեմերը պիտի մասնակցին Կաթողիկոսական ընտրութեան, և կեղեցական և աշխարհական պատգամաւորներով որոնց թիւը 50է աւելի պիտի ըլլայ: Ժողովը պիտի գումարուի Ատանայի մէջ: Կաթողիկոսը կը նտրուի Սիսի միաբաններէն:

Երեքշաբթի օրը գումարուած նըպաստից Յանձնաժողովը նկատողութեան առաւ գաւառներէ հասած գրութիւններ, որոնք կը յայտնէին թէ անհրաժեշտ է Որբանոցներու ձմեռուան պարէնը այժմէն հայթայթել, և որոշեց բոլոր որբանոցներուն երկերկու ամսական կանխիկ զրկել՝ այդ պէտքին դահացում տալու համար: Որբանոցներու յատկացուած երկու ամսականի դումարը 1000 սակիի կը հասնի:

Բարիպի ալգ. Մատրան Հոգաբարձութիւնը եպիսկոպոսական արժաթեայ գեղեցիկ գաւազան մը ընծայել է Եւրոպայի հայ գաղթականութեանց հոգեւոր հովիւ Տ. Գէորգ Եպիս. Իւթիւճեանի: Նոյնպէս Ս. Հայրապետը ձեռք մը եպիսկոպոսական ծանրագին զգեստ նըւիրած է յիշեալ Սրբաղանին:

Ստոյգ աղբիւրէ կը տեղեկանանք թէ, տեղւոյս Ազգ. վարժարանի բարձրագոյն կարգերու ուսանողք անկրօնութեան գաղափարներ կը տածեն: Բան մը, որ պատճառ կը բերէ վարժարանի վարչութեան:

Պուրէշէն կը գրեն թէ, ողբացեալ Տ. Յարութիւն Զաքարիան, որ թորախտէ կը աւաւազէր, 35 օր նոյն քաղաքին «Քօլցեա» հիւանդանոցին մէջ անկողնոյ ծառայելէ, ու տասն օր ալ իր փափաքանացը համաձայն առանձին տան մը մէջ խնամուելէ ետքը Յուլիս 26ին հոգին աւանդել է:

Ողբացելոյն հիւանդութեան և յուլարկաւորութեան համար պէտք եղած ծախքը (114 Քր) տեղւոյն Հայ գաղթականութեան կողմէ հոգացուել է:

Յուլարկաւորութիւնը վայելուչ շքով կատարուելով, մարմինը ամփոփուել է ալգ. գերեզմանատունը:

Յարգանք իւր յիշատակին:

ԾՈՒՌ. ՆՍՏԻՆԻ, ԲԱՅՑ ՇԻՏԱԿ ԽՕՍԻՆԻ

Առաջուց ի վեր թէ՛ Պատրիարքարանը և թէ՛ գաւառական առաջնորդարաններ շարունակաբար կը զբաղին էրիկ կնկան ու պանդխտութեան վերաբերեալ խնդիրներով, վասն զի մեր մէջ, մանաւանդ գաւառները աւանդական հին յուր սովորութիւններ գեռ կը շարունակուին, ու քիչ անգամ կը պատահի որ անհամաձայնութիւններ տեղի ունենան ընտանեկան յարկին տակ, երբ այլը ներկայ է և քիչ շատ ապրուստի միջոց մը ունին: Գաւառներու մէկ քանի կողմերը պանդխտութիւնը ընդհանուր ոտփորութիւն մը դարձած է, այնպէս որ, երբ տղայ մը արւունքի կը հասնի, կարծես բնական պահանջ մը կունենայ պանդխտելու. ուստի իր ծնողքը նուիրական պարտականութիւն կը համարին կարգել զայն պանդխտելէ առաջ, այն յուսով թէ աչքը տանը մէջ պիտի մնայ. մինչգեռ գաւառի այդ անմեղ և մաքուր երիտասարդը իր պարզ կենցաղի սահմանէն դուրս ելնելով երբ կը մտնէ Պոլիս կամ ուրիշ հաճոյալի քաղաքներ, յանկարծ յետաշրջում մը կունենայ պարզութենէ գէպի զնվարութիւն դիմելու, ու կը յառաջանայ այն ընթացքին մէջ տարիներով, մոռնալով իր ծննդավայրը, մայրը, գեռատի կիներ և մինչև իսկ գաւազը: Կան կարգ մը գաւառացիներ, որոնք տաս-

նեակ տարիներէ ի վեր հեռացած են իրենց ծննդավայրէն, այնպէս որ այսօր թերեւս մոռցած են զայն. այս պարագային մէջ երբ երկիրը գտնուող իր կիներ սկսի արտագարգ ընթացք մը ունենալ, ո՞վ է մեղաւորը, երբ քիւրտ մը կամ թիւրք մը այդ մարդուն ընտանեկան յարկը անպատուելու ձեռնարկներ կընէ զայն անտէր ու անխնամ գտնելուն համար, արգեօք պիտի կարենա՞նք զայն միայն յանցաւոր հռչակել, երբ կիներ ա՛լ յուսահատած և լքուած է իր էրկնէն:

«Դուռ դոց պահէ՛ ու զրացիւ գող մի՛ բռներ» կըսէ առածը. հետեւաբար մեր պարտականութիւնն է, երբ նուիրական կապերով կապուած ենք ընտանեկան յարկին հետ, մտածել մեր վիճակին վրայ եւ պաշտպանել մեր ընտանեկան պատիւը և անով ազգի պատիւը: Տարիներով հայրենի երկրէն հեռու մնալէ անհամար չարիքներ երեւան կուգան: Ազգային խնդիրներ կան ու միշտ եղած են, շատեր գիտենք որ մահն իսկ աչք առնելով ամենավտանգալի ժամանակի մէջ գացին իրենց ընտանիքը պաշտպանելու, որոնք ամեն տեսակ գովեստի արժանի են, մինչդեռ անդին շատերը զեղխ կեանք մը անցունելով, այլ և այլ սին պատրուակներով. («խնջտին ցուրտն է մահանայ» առածին պէս) հայրենիք չերթալով կուգին արդարացնել զիրենք և նոյն իսկ Բ. Գ. ամուսնութիւններու փորձեր կընեն: Ը. յս պարագային մէջ երբ անօգնական կիներ կամ ծնողքը երկրին մէջ կը հարստահարուին, ո՞վ կըլլայ մեղաւորը. երբ կըսենք հոն ամեն տեսակ բռնաբարութիւններ կը կատարուին ու մեր այն կարգի պանդուխտ եղբայրները հոս հոն կը շարժադիտեն, ո՞վ կըլլայ յանցաւորը. . . : Ժողովուրդը երբ չգիտէ գործել և իր տունը պահպանել թըշնամին դէմ, այլ վատաբար կը լքանէ զայն, ինչ կարժեն և ինչ կարող են ընել նոյն իսկ կուսակցութիւնները, որոնցմէ կ'ուզենք և կը պահանջենք ամեն բան:

Կեդրակացներ, ըսելով թէ, գաւառաց մէջ-եղած հարստահարութեանց, բռնաբարութեանքու և այլ չարութեանց պատճառնե-

րէն մէկն ալ մեր կարգ մը գաւառացի ազգայնոց արտաբերութիւնն է:

«Ծուռ նստինք, բայց շիտակ խօսինք»:

ՀՈՒՐ

ՇԵՐԱՍ ու ՄԱՐԴ

Շերաւն, իսկ իս, յաշխարհի սաս,
Արարածն է էն քարեքսաս.

Միւնջ ևորասի եւ իոր սարիք՝

Կաշխարի ևա ուժով տկուն.

Երբ խախահաս շինի՝ քաղցրիկ

Եւ անխորով քաղու ի քուն.

Եւ ծերութեանն ալ անխորիկ

Կ'երթայ հանգիլ ի գիրկ Մահուն:

* *

Այնպէս չ'է և կեանք, յիճակ մարդկան,
Ոյց մախող եւ գնացի ու վախճան.

Երիտասարդ՝ հաճոյք չ'ընի

Յաճախ շեղի մեզ ընկել տան.

Չախահաս՝ միտք, անմիտք մեր տանջին

Բիւր հոգեւոր գործոց եւ տան.

Ծեր՝ երբ փչեմք իսկ շունչը վերջին,

Մեզ ըսպառնա՛յ հոռի Դասաւասան . . . :

ԾԱՆՕԹ

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

Բացում է բաժանորդագրութիւն . . . չի հրատարակուելու համար,

«Համադասարան» հանդէս ամսօրեայ, Բարիզի հայ ուսանողաց կողմէ.

Աշխարհածնունդ «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթ, Ռուսէութի ուսուցչական կաճառին (?) կողմէ,

Վերերեւուսի «Խուզակ» կիսամսեայ հանդէսի:

Բաժանորդագրութիւնք ԿԱՆԺԻԿ են:

Առաջին . . . չի հրատարակուել թիւերը ընդունողները բաժանորդ պիտի համարուին:

Առիթէն օգտուեցէք:

ՏԳԵՂ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԺԱՌԱՆԳԱԿԵՐ ՄԸ

Հայաշատ քաղաքի մը զբոսարաններէն մէկուն մէջ գիշեր մը զուարճասիրաց հոծ բազմութիւն մը հաւաքուած էր :

20-22 տարեկան բաւական բարեգէմ երիտասարդ մը զբոսարանին պարտէզը ծառի մը տակ նստած, առջևի սեղանին վրայ դըրուած օղիի շիշէն մերթ ընդ մերթ գաւաթը լեցնելով կը խմէր : Այս երիտասարդը հօրէ որբ ու մօրը մէկ հասակ երես առած զաւակը ըլլալով, հօրմէն մնացած քիչ մը ժառանգն ալ ուտելով հատցունելու վրայ էր :

Ժամը 12ն էր . տարեց տիկին մը եւ 20—25 տարեկան օրիորդ մը, որոնց կը հետեւէր յիսունի մօտ պարոն մը, մեր նկարագրած երիտասարդին մօտեցան :

— Բարի իրիկուն, միւսիւ կուռնիկ .

— Վա՛յ, տիկին Սօֆի, հրամայեցէք . գոչեց երիտասարդը աշխուժիւ ու տեղէն ցատկելով յարեց, կարսօն, շուտ աթոռ բեր :

Կարսօնը անմիջապէս պէտք եղած աթոռները բերաւ :

Երիտասարդը, ձևի մը գնելով իր աթոռը առաւ ու օրիորդին քովը տեղաւորուեցաւ . օրիորդին հայրն ու մայրը այս մերձեւորման շտեմնալ ձեւացուցին :

— Ի՛նչ կը խմէք տիկին . հարցուց երիտասարդը .

— Կաղէօզ մը .

— Ես ալ . ըսաւ տարեց պարոնը, սուրճ մը պիտի խմեմ :

— Հապա դո՛ւք, օրիորդ .

— Ի՛նչ գիտնամ՝ միւսիւ կուռնիկ :

— Աղէկ գարեջուր կայ :

— Դուք գիտէք միւսիւ կուռնիկ .

— Կարսօն, հոս եկուր, մեզի սուրճ մը, լիմոնաւա մը եւ շիշ մը պիտա բեր .

— Շատ աղէկ .

— Ո՛հ միւսիւ կուռնիկ, շատ է . ես շիշ մը պիտա խմելու ըլլամ նէ՛ գլուխս բոլորովին կը դառնայ :

— Այս պիտան ամենեւին չի դաշիր

ձեզի օրիորդ . : Տիկին այս գիշեր բաւական բազմութիւն կայ, այնպէս չէ՞ .

— Այո՛, բայց նուագարանը ինչո՞ւ չի չալեր .

— Յոգնութիւն կանոնէն կոր . բայց հիմա կըսենք որ չալեն, կարսօն, ըսէ նուագածուներուն որ աղւոր խաղ մը կանչեն :

— Շատ աղէկ պարոն :

Այս միջոցին օրիորդը՝ միւսիւ կուռնիկին իւրեն մօտ գտնուած ձեռքը մտերմաբար սեղմեց . միւսիւ կուռնիկ այս սեղմումէն զգացած վերջին աստիճանի ուրախութիւնը չի յայտնելու ջանքով լեցուն գաւաթ մը օղի եւ կուլ տուաւ :

— Վարդենի, սա գաւաթիս մէջը շիշէն քիչ մը պիտա լեցուր ըսաւ մայրը աղջկանը :

— Կաղաչեմ տիկին, ուրիշ շիշ մըն ալ թող բերէ : Կարսօն :

— Չէ՛. չէ՛. չեմ ուզեր, շիշէ մը պիտան ո՛վ պիտի խմէ :

— Դուն միշտ բեր, կարսօն, շիշ մը պիտա, սա օղիս շիշն ալ լեցուր :

— Գլխուս վրայ, միւսիւ .

— Միւսիւ կուռնիկ, դուք ալ մեզի պէս պիտա չի խմէք . օղին սրտերնիդ կայրէ :

— Արդէն սիրտս այրած մրկած է . օրիորդ, սակայն ձեր առաջարկին ամենայն սիրով կը համակերպիմ . օղիիս շիշը լեցնելուս պէս, պիտա պիտի սկսիմ :

— Մայրիկ, սա կանչած խաղերնին բէք անձոռնի բան է .

— Կարսօն . հոս եկուր .

— Կարսօն, սա ֆրանքը նուագածուներուն տալով ըսէ որ «սէվսիճէ իմ սէն տուրուրաւ պէն ֆիմէ» եւ այդպէս խաղ խաղ կանչեն :

— Շատ աղէկ միւսիւ :

— Ուրիշ ալ միտքդ եկաւ, բէք սիրած մէկ խաղս է տտիկա . մէյ մըն ալ «սէնի մասկարա սէնի» երգ մը չի կայ, կը խենդենամ անոր վրայ :

— Հիմա առաջինը լեցնելուն պէս ձեր ուզածը սկսել կուտամ :

Միւսիւ կուռնիկ այս հաճոյակատարու-

թեան փոխարէն գաղտնապէս օրիորդին մէկ կսմիթին ալ արժանացաւ . այս կսմիթը թէև բաւական ցաւ պատճառեց, բայց մեր դիւ- ցազնը բաջուար դիմանալով . առանց զգա- ցած ցաւն յայտնելու, օղին խմելը շարունակեց:

— Միւսիւս կուռնիկ, աս գիշերուան խը- մած պիրաս ամենեկին չի վնասեց ինծի .

— Ուրիշ շիշ մ'ալ թող բերեն :

— Ո՛չ, ո՛չ, ալ չեմ խմեր . չափէն ա- ւելի խմեցի .

— Խաթերս համար . . .

— Օ՛. այդ ուրիշ . . .

— Կարսօն . Չ շիշ պիրա բեր . Ամբաս- քանոս աղա , հրամանքնիդ օղի չէ՞ք խմեր .

— Ո՛չ, տղաս . է՛հ խաթերդ համար գաւաթ մը պիրա կը խմեմ :

— Կարսօն , շիշ մը պիրա բե՛ր :

— Ի՛նչ կընես միւսիւս . կուռնիկ . հոս այսչափ պիրա կայ . նորեն բերելը աւելորդ է :

— Հոգ չէ՛ օրիորդ , նորէն թող բերէ . հիմա հայրիկիդ աղաչանք մը ունիմ , նայինք պիտի ընդունի՞ .

— Ի՛նչպէս . . .

— Վաղը տեղ մը երթանք կերակուր մը ուտենք . բայց տունէն ամենեկին բան մը չպիտի առնուի , ես ճաշարանէն ամեն պէտք եղածը կարգի կը դնեմ :

— Անանկ է նէ՛ թէքմիլ խուզիի շիշ ֆէյսալի մը կուզեմ :

— Ապրիս . պռավօ՛, իշթէ ասանկ կու- զեմ , քաջուող մարդէն չեմ ախորժիր . Աս- տուած վկայ շատ հասուն մարդ ես , հայրիկս ես , սա ձեռքդ տուր , պիտի պահեմ .

— Կամաց , տղաս սեղանը պիտի տա- պալես .

— Թող երթայ տապալի , գուն ողջ եղիր :

Այս ըսելով սեղանին անանկ ուժգին կից մը տուաւ որ գետին տապալելով , վրան գլտ- նուած շիշերուն ու դաւաթներուն մէկ մասը կոտորեցան . ու ինքն ալ հաւասարակշռու- թիւնը կորսնցնելով , միւս կողմ տապալեցաւ :

Այս արկածը բազմութեան ձիծաղը շար- քեց . բայց սպասաւորք անմիջապէս վազեցին միւսին վերցուցին ու սեղանը մաքրեցին .

— Միւսիւս . մէկ կողմերնիդ ցաւցուցի՞ք .

— Ո՛չ տիկին , ես վախցայ որ օրիորդը մէկէն ի մէկ դող կելլէ . . . հէմ ձեզի բան մը ըսե՛մ , սանկ , նուագածուններուն մօտիկը երթանք նստինք . կարսօն , մեր մասան հոն տար ու նորէն օղի մեզի կ պիրա բե՛ր :

— Անմիջապէս , ըսելով սեղանը նորէն զարդարուեցաւ :

— Ինծի նայէ՛ հաճի վարպետ . ե՛ր- րիւկ սեմայի ունի՞ք .

— Տէօրդ նայ վազող կազէլ անգամ ունինք :

— Անանկ է նէ՛ աղւոր սեմայի մը կանչեցէք .

Նուագածուք սեմային սկսան . օրիոր- դը՝ մօրը գաղտնի մէկ ակնարկին վրայ իր ձեռքովը գաւաթ մը օղի լեցնելով , միւսիւսին հրամցուց :

— Իմ ձեռքովս օղի մը չե՛ս խմեր .

Օրիորդին այս առաջարկէն երիտասար- դին խելքը գլխէն երթալով , ինչ ըսելիքը կորսնցուց :

— Օրիորդ , աս մէկ գաւաթ օղիով ինծի . . . ի՛նչ ըսեմ . . . ո՛հ , ինծի . . . եր- ջանիկ . . . երջանիկէն ալ աւելի . . . մեծ բարիք ըրիք . . . կենացդ . . . կենացիդուդ . . .

Օրիորդը շնորհակալութեան համար գաղտ- նի կսմիթ մըն ալ փակցուց , բայց կերեւայ որ այս անգամուանը քիչ մը ուժովկէկ ըլլա- լուն , ցաւէն չի կրցաւ ինքզինքը զսպել ու բոլոր ձայնովը «կարսօն» պոռաց :

— Հրամմեցէք տէր իմ :

— Քեզ ո՛վ կանչեց պէ՛ .

— Հիմա կարսօն պոռացիր :

— Հա՛ , իրաւ է . . . ի՛նչ գիտնամ , ճիշդ է . . . նուագածուններուն ըսէ՛ եւս մօ- րէ եւս , եւս սաւս քէսեւան կանչեն .

— Միւսիւս , սա գաւաթիս մէջ քիչ մը պիրա կը լեցնե՛ս .

— Գլխուս վրայ օրիորդ , մեծ շնորհք մըն է որ ինձ կընէք :

— Պաշտօնութիւն , դաւաթէն դուրս կը թափէք կոր :

— Անգամ շիշէին բերանը գաւաթէն

անդին է անցեր . կեցէք օրիորդ , գաւաթ մը
օղի ես լեցնեմ , միասին քօզու մը ընենք . . .
ինծի նայէ՛ վարպետ , ուրիշ եխրիկ երգ մը
սկսեցէք .

— Էշկիներ բայց մանի մը կանչե՞նք
չէ նէ եօրկա գալող զօշմա .

— Երկուքէն ալ կանչեցէք .

— Գլուխն կենացդ միւսիւ կուռնիկ .

— Անոյ շաբար ըլլա՛ օրիորդ . . . :
Օրիորդին մայրը տեսնելով որ երիտասարդը ալ
ըրածը թողածը չգիտեր , ամուսնոյն ըսաւ :

— Ամբարիանոս աղա , սահաթը բա-
նի՞ն է .

— Իրեքին տասը կայ :

— Օ՛ . Ժամանակը անցեր է . Մ . կուռ-
նիկ , մեղի հրաման :

— Ի՛նչպէս , պիտի երթա՞ք . բայց չեմ
թողուր . . . անկարելի է , չըլլա՛ր .

— Զաւակս , Ժամանակը ուշ է . դուն
ալ քիչ մը հանգստացիր որ վաղը տեղ պիտի
երթանք :

— Ճիշդ է . ուրեմն ոտքի վրայ մէյմէկ
հատ խմենք ու ետքը մեկնեցէք :

— Ալ չուզեր . հատ խմեցիր :

— Տիկին . գինով եմ . ներէ՛ , ինծի . . .
ա՛խ . . . լուսահոգի հայրիկս միտքս եկաւ . . .
իհի՛ւ , իհի՛ւ . իհի՛ւ :

— Տղա՛ս , մեռնողները թող լան , քե-
զի պէս ճիւղան երիտասարդը ինչո՞ւ լայ .

— Իրաւունք ունիս , անանկ է նէ՛ մէյ-
մէկ հատ տահա տնկենք .

— Չէ՛ . չէ՛ , ալ բաւական է , գիշեր
բարի :

— Գիշեր լոյս բարի . . . ա՛խ . . . կեր-
թաք կոր հէ՛ . . .

Օրիորդն ալ սիրուն ժպիտով մը գիշեր
բարի ըսել ետքը մեկնեցան : Իսկ Մ . կուռ-
նիկ , թաշկինակը հանելով՝ զայն օգին մէջ
կը տատանէր ու երբ բոլորովին հեռացան ,
տախտակէ նստարանի մը վրայ երկնցաւ ու
անմիջապէս քնանալով սկսաւ խռկալ :

ԴԻՏԱԿ

Ծ Ի Ծ Ա Ղ

ԶՈՒԱՐՃԱԼԻ ՏԱՊԱՆԱԳԻՐՔ

10

«Աս հանգչի Մեծն Աղեփասանդի պես
պէ՛րճ , յաղթող ,
Աշխարհասաս մի մարդ . ես . աշխիճն
ա՛րի մի հող :»

20

«Այս ճերմակ փառին ներքեւ կը հանգչին
Անպէս ոսկորներն՝ ազակ մի մարդու ,
Որ՛ դիմաւոր՝ մեռաւ տարոյն օրն փերջին
Ուրպէս զի պարզեւ յոսիպուի՛ տալու . . .»

30

«Այն որ աս դրնի՛ յաւեր կ'ստնուր փոխ,
Չէր գիտէր առածն է՛ տալ յախեան .
Օրհասն եկաւ զինքն ընեղ ոտնակոխ . . .
Իր առածն հասոյց միայն . . . Բընութեան . . .»
(Փրանս . նման .) Ա .

ՀԱՆՆԵԼՈՒԿ

Էյլէտի խարապ պիլա մէրհամէթ
Բիմինին պաշընը , քիմինին ելլողինիւ ,
Պիլմէզ աղընտան չըգան սէօղինիւ ,
Բիմէ խթմէզ կէօրսին ելլողինիւ :

(Այս դաստաւարակին անունը զիացող ու
իր ստորագրութեամբը հրապարակողին՝
հայերէնի թարգմանուած ու մէկէ ա-
ւելի օրինակ չունեցող ընտիր վիպասա-
նութիւն մը պիտի նուիրուի) :

Աղատախոհ

Լուսանկարի մեքենայ մը իր գոր-
ծիքներով և դեղերով ծախու է , ար-
հեստը առանց փոխարինութեան սով-
րեցնելու պայմանաւ : Դիմել խմբագ-
րութեան :

ԿԵԼ ԳԱՆԹԱՐԱՒ . .

(Շարունակութիւն)

— Հրամանէ նայինք Պ. Բոթոթիկ, սա երկու Բիպրոզները կշռէ :

— Ո՞վ են ասոնք :

— Ասոնք կը պարծենան թէ իրենք Պուրկապի յուսաւորիչներն են, աս են աստեն ազգային գործերու մէջ կը խոթեն քիթերնին, խելքերնին փշածին պէս կը կտրեն կը կապեն, մէկ խօսքով, խենդ ու խելառ բաներ կընեն. ուստի արժանի են կշռուելու :

— Այլեկ ա, ֆիլէին մէջը ինչո՞ւ թըխմը էք :

— Իրենց գործած զիզումները քիլէ տօլուտի ըլլալուն, կուզենք որ անով տառանին առնէք :

— Անանկ է նէ պարոններ, մի երեւաք . . կը քաշեմ կոր :

— Պիզ էրմէնի՞ճէ պիլմէյիլ :

— Հէ՛ ինչ կըսէ :

— Հայերէն չենք գիտեր կըսէ :

— Է՛հ, պիզ տէ թիւրքէ՛ սէօյլէրիլ, սալանմայըն քի ալարը պուլայըմ . . չէքիւօրըմ :

— Նաֆիլէ Կօրուլմա, չէքսէնտէ չէքմէսէնտէ պիլ քէնտի ալարըմըլը տէյերիմիլի պիլիլիլ. սէքսէն տէֆա էօլչիւլմիլչ պօշանմըլըլ :

— Էյի ամա, պիլ տէ թարթմալըլըլ քի աննայալըմ :

— Հաճէթ Եօք իսթէրտէն թամ հիւսալըմըլը սանա վէրէլիմ :

— Հատէ պազայըմ, էկէր տօլրու սէօյլէրտէնիլ էրպապը սէնաաթ օլտուլընըլը խպաթ իտէճէիմ :

— Էօյլէ իսէ տիննէ Պ. Բոթոթիկ, պիլ թէնճիլէ Եուվարլանմըլ զաբաղընը պուլմուշ, Եախտ լէհ, ն երպըք կիպի իքի արգատաշ օլուպ, պէն՝ քիմին աւապաընա պինէր իսէմ օնուն տալուլունը չալարըմ. քիլէ տօլուտու հըվըրըլըլըլ, ըմ էլտէ պիր տիր. արգատաշըմ իսէ միլլէթէ պէշ բարա ֆայտաըլ օլմայըպ հէման պէշ Եիւլ լիրալըլ զաւարըլ տօլուտնուշ տըր տէյէճէք օլտամ, միւպալաղա իթմիլչ օլմամ, աէյիլ մի Գօգօշ տայը :

— Տօլրու սէօյլէյօր :

— Նէ՛ չարէ քի տիւնեատա հէր էյլիք պիր Եէրտէ օլմայօր, էկէր արգատաշըմ վազթընտա պիր աղ միւրէքէպ Եալամըլ օլտա, Եանի, ալըլ կէօրիւպ բէնի մէհ, քէմէյէ չէքմէմիլչ օլտայըլըլ, Պուրկապ օնուն սայէսինտէ իլէրի կիտէճէք իտի, իլէրի . . .

— Պաթմապ իչիւն տէնիլէ տօլրու տէյիլ մի . .

— Արթըլ հասըլ իսթէրտէն էօյլէ աղնա : Գօգօշ տայըլ էօլիւպ կիտինճէյէ գատար թաղական գալըլըլ ըտը :

— Տէմէք ուլ թաղական օլմադ իչիւն պուրանըն իչլէրնի պէօյլէ գարմադարըլ իթմէք արղուսընտա պուլուսուեօրսէնըլ :

— Հայ էօլմիւլիւնէ լահմէթ. թամ իսթէտիլիմիլ տէ պու Եա, գուրտ տիւմանլը հալայըլ սէվէր. պիլ միլլէթին իլլէթիլիլ, օնուն իչլէրի գարըլըլ օլմալըլ քի տալալէրա չէվրիլիլն : Իչլէթ Պ. Բոթոթիկ պիլ քէնտի մէհարէթիմիլչի չէքմէյէրէք սէօյլէտիք, հասըլ, էրպապըլ սէնաաթ ըմըլըլ տէյիլ մի :

— Օ . . հիչ մանէա գալտըլմազ, ալլահ ութանտըրմասըն :

— Շիմտի իսթէտիլին կիպի պիլիլ թարթապիլիլին :

— Արթըլ թարթմայա հաճէթ գալմատը. Եալընըլ Վ. վ չալուշ սիլի քիլինիլ իլէ պէրապէր կէօթիւրիւպ տէնիլէ աթմալըլ քի, օրթալըլ խաղաղութիւն պուլտուն :

— Վէվ չալուշ քէնտիտի տէ պիլիմլէ պէրապէր տէնիլէ աթըլմալըլ տըր, չիւնքիւ օ տա պիլտէն տիր. Եօգսա սէն սաղ պիլ սէլամէթ, էօյլէ թարթըլմադլա, գանթարլանմաղլա պիլ պիլտիլիմիլտէն չաշմայըլ : Պուրկապ պիլիմ տիր, պիլիմ էլիմիլտէ տիր :

— Ալլահ գուրթարըն սիլին կիպիլէրին բէնչէսինտէն :

— Հայտէ Գօգօշ տայըլ, գալը կիտէլիմ — ըսելով երկուքն ալ ֆիլէն գուրս նետուցան և կորան . . չենք գիտեր ո՞ւր . . .

— Պ. Բոթոթիկ, շու 45 ի. քի քի ալաղլը սպիրթօ ֆըլըսընը տա թարթմալըսըն. վարժապետիմիլ կէօնտէրտի :

(Շարունակելի)


ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ Ա. ՏԱՐԻ

Կազմեց Յ. Կ. Պոնձոյեան

Այս պատկերազարդ ֆերական — ընթերցարանը որ մինչև օգոստոս 20 լոյս պիտի տեսնէ, կը յանձնարարուի մասնաւորապէս Պատ. ուսուցիչներու ուշադրութեան: Պատրաստուած է շատ դիւրութեամբ մէթոտով և կը պարունակէ բարոյական խրատներ, իրազեկական և առողջապահական ծանօթութիւններ, կարճ և սիրուն պատմութիւններու և առածներու ձեւին տակ, որոնք զբոսնում են մանուկներու հասկանալի լեզուով: Ազգային-պատմական ամենէն նշանաւոր մէկ քանի դէմքերու և դէպքերու վրայ կարճ տեղեկութիւններ, քերականական քանի մը գիտելիք, մանկական երգեր և հանելուկներ, ամենքն ալ խնամքով ընտրուած, պղտիկ տղոց համար շատ հետաքրքրական և հրահանգիչ կը դարձնեն զրթոյկին ընթերցումը:

Գին, 60 սանթիմ հատը: Դրպրոցներու և գոնէ 20 օրինակ զընողներու համար 15 օ/0 զեղջ: Դիմել սա հասցէով՝ J. G. Bondjoukian Varna

Վաղածանօթ Մեխենագործ



Ա. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Տրակոման փողոց թիւ 1210, Վառնա

Ժամանակէ մը ի վեր երկրագործական մեքենաներով զբաղած ըլլալուս

պատճառաւ իմ մասնաւոր գործարանս գոց կը մնար. հիմա զայն վերաբացած ըլլալով, կը ծանուցանեմ թէ, ամենտեսակ կարի մեքենաներու համար մասնագէտ վարպետ մը բերել տուած եմ:

Գործարանիս մէջ կը նորոգուին նաև շոգեշարժ և ջրաշարժ մեքենաներ, հեծանիւներ (պիսիքէթ) դուլպայի և երկրագործական մեքենաներ, ջրհաններ և այլն, զորս նորոգելէ վերջը եթէ մէկ տարուան միջոցին աւրուին, պատրաստ ենք վերանորոգելու: Նոր ջաղացներ և շոգեաղօրիններ նոր ի նորոյ կը հաստատենք կանոնաւոր կերպով:

ԸՆԴԱՐՁԱԿ

ՈՐ ԲՆԱՐ ՀԱՅԱԿԱՆ

Կամ Հաւաքածոյ

Հին եւ նոր Ազգ. երգերու



208 էջերէ բաղկացած սոյն երգարանը կը ծախուի Վառնա Ա. Զարպհանէի հանի գրատունը: Դինն է 2 ֆր. թղթատուրի ծախքը դրատան վրայ ըլլալով: Դրամի փոխարէն կ'ընդունուի Պուլկարական Գաղ Գերմ. Անգլ. և Խրքական չի գործածուած նամակադրոշմներ:

2

Ն Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ը

Կամ

Մեղի և Ապաշար

Պոլսական կեանքէ բաղուած

Թատերախաղ 5 արար և 1 պատկեր.

Գրեց Տիրան Կ. Փափագեան

Դին 60 սանթիմ: Դիմել խմբագրութեան:

Отговорникъ М. Сконовъ
Печатница Взаимность — "Варна."